թե ներէթնիկ կապերի ինտենսիվությունը: Պատմա-համեմատական վերլուծությունը նպաստում է ոչ միայն առանձին բաղադրիչների /ինչպես, օրինակ՝ բնակարանը, հագուստը, ուտելիքը և այլն/, այլև տարբեր պատմական դարաշրջանների նյութական մշակույթի ամբողջության ընդհանրացված տիպերի կազմում: Հենց նման ընդհանրացված տիպերն էլ այս կամ այն էթնոսի նյութական մշակույթի ըմբռնման և այլէթնիկ համալիրների հետ լայնորեն համադրելու առավել արդյունավետ գործիք են:

3. Հայկական բարձրավանդակի բնակչության նյութական մշակույթի հետազոտումը վերը նշված տեսանկյուններով, նախ և առաջ, հնարավոր է դարձնում ուսումնասիրվող ռեգիոնի բնակչության նյութական մշակույթի ընդհանրացված տիպերի կազմումն ըստ զանազան պատմական ժամանակաշրջանների: Այնուհետև, դրանց բաղդատությունը նյութական մշակույթի այլ համալիրների հետ հնարավորություն է ընձեռում բացահայտելու ինչպես հաճախ մշակութային ավանդույթի ուժ ստացած էթնիկորեն յուրահատուկ գծերը, այնպես էլ առաջավորասիական և կովկասյան համալիրների հետ համադրվող ընդհանրությունները, որոնք հայկական բարձրավանդակի բնակչության նյութական մշակույթը վերջինների հետ մի կարգի մեջ են առնում:

Ջավեն Խառատյան

## ԴԻՊԱԾԱՑԻՆ /ՕԵԱՋԻՈՆԱԼ/ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

1. Հայ ժողովրդական հավատալիքների և դրանց հետ առնչվող / շատ հաճախ էլ՝ դրանցից բխող / բազմաբովանդակ ծեսերի համակողմանի գիտական ուսումնասիրությունը ենթադրում է տիպաբանական և կառուցվածքային վերլուծություն: Նման հարցադրման դեպքում որոշակիորեն առանձնանում են հավատալիքների, սովորույթների ու ծեսերի հաստատուն, պարբերաբար կրկնվող համալիրներ և փոփոխական, որոշակի պարբերացման չենթարկվող ծիսախմբեր:

2. Հաստատուն ծիսական համալիրներ են կազմում ինչպես ժողովրդական-տոնացուցային, այնպես էլ ընտանեկան / ծննդյան, հարսանյաց և թաղման/ ծեսերը: Առաջինն ամեն տարի /պարբերաբար/ կրկնվող հասարակական ծիսաշար է, երկրորդը՝ կանխատեսվող պարտադիր ծիսաշար յուրաքանչյուր ընտանիքի կամ առանձին անհատի կյանքում: Տոնա-

ցուցային և ընտանեկան ծեսերը միմյանցից որոշակիորեն տարբերվում են նաև կառուցվածքային ու ֆունկցիոնալ նպատակամղվածության առումով:

3. Այս իմաստով որպես առանձին, ինքնուրույն խումբ կարող է դիտվել ծեսերի ու պատկերացումների այն շարքը, որը կոչված է մարդկանց զերծ պահելու անակնկալներից և կամ խափանելու հնարավոր անհաջողությունը: Հիրավի, եթե անդրադառնալու լինենք հայերի սովորույթների, կրոնական պատկերացումների և սնահավատ արարողությունների ողջ համակարգին՝ ժողովրդի կյանքում դրանց ունեցած դերի և տեղի կենսական անհրաժեշտության տեսանկյունից, ապա, թերևս, առաջին պլան մղվեն այն ծեսերը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մարդկանց առողջական վիճակի, բարեկեցության և հաջողության հետ: Այս տիպի ծեսերի ընդհանուր, միավորիչ գիծն այն է, որ դրանք կյանքի են կոչվում զերազանցապես անսպասելիորեն, վաղօրոք չնախատեսվող իրադարձությունների բերումով: Նման կարգի ծեսերի համալիրը բնորոշելու համար առաջարկվում է կիրառել ,,դիպվածային/օկազիոնալ/ հասկացությունը, որը կարող է ներառել ինչպես տարբեր հիվանդությունների և դժբախտությունների վերաբերող ժողովրդական պատկերացումները, այնպես էլ դրանց հետ առնչվող ժողովրդական բժշկությունը:

4. Գրավոր աղբյուրների և դաշտային ազգագրական նյութերի համեմատական քննությունը հնարավորություն է ընձեռում հայ ժողովրդական պատկերացումների մեջ առանձնացնելու հիվանդության հնարավոր պատճառների երեք հիմնական մոտիվ.

ա/ հիվանդություններ, որոնք ծեռք են բերվում անմաքուր ուժերի / չար ոգիներ, ,, չար աչք,, , զանազան վնասաբեր ծեսեր / ներգործության հետևանքով ,

բ/ հիվանդություններ, տրված տարբեր սրբերի կամ աստծո կողմից, որպես պատիժ ծանր մեղքերի դիմաց,

գ/ հիվանդություններ, որ առաջ են գալիս հիմնականում մեխանիկական պատճառներով:

5. ,,Ա,, և ,,բ,, կարգի հիվանդությունները համարվում են վերուստ տրված և բուժելի են միայն զերբնական ուժերի միջամտությամբ, մինչդեռ ,,գ,, կարգինը երկրային են, ապաքինելի բացառապես ժողովրդական բժշկության միջոցների կիրառմամբ: Հիվանդությունների բուժմանը ծառայող ծիսական պրակտիկայում որոշակիորեն սահմանազատվում են՝

ա/ միջոցներ, որոնք մատչելի են ամենքին,

բ/ միջոցներ, որոնք հասմարվել են միայն որոշ մարդկանց մենաշնորհը:

Տարբեր հիվանդությունների, պատուհասների ու անհաջողությունների դեմ պայքարելու և դրանցից ազատվելու միջոցների ընտրավարում պրոֆեսիոնալիզմը արտահայտվում է հատուկ ,,մասնագետ-միջնորդների,, հանդես գալով: Դրան մեծապես նպաստում են / բացի այդ մարդկանց՝ մյուսներին անսովոր թվացող անձնական շնորհից/ նաև անիրական/ոգիներ, սրբեր/ և իրական /մարդիկ/ աշխարհների միջև երևակայական կապի ժողովրդական պատկերացումները:

Սուրեն Հովսեպյան

## ՁԻՔԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՁԻՔԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

1. Ձիքատու բույսերի մշակությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր դարի քսանական թվականները հայերի երկրագործական տնտեսության կարևորագույն ճյուղերից է եղել: Հայաստանում մշակվել են տարբեր ձիքատու բույսեր, որոնցից առավել տարածված են եղել կտավատը, սորեկը, քնջութը, կանեփը և հլածուկը:Դրանցից ստացվող ձեթը կիրառվել է տնտեսության ամենատարբեր բնագավառներում:

2. Ձիքատու բույսերի մշակման հիմնական նպատակը հատիկի ստացումն է եղել, որից էլ ձեթ են գտել: Հատիկից նաև որոշ տեսակի, առավելապես ծիսական կերակուրներ են պատրաստել:

ա/ Սննդի համակարգում, հատկապես ծիսական կերակուրների և թխվածքների մեջ, լայնորեն կիրառվել է կտավատի, քնջութի և սորեկի ձեթ:

բ/ Կտավատից, սորեկից, մանանեխից և այլ բույսերից ստացված ձեթը օգտագործվել է նաև տեխնիկական նպատակներով՝ ընակարանը լուսավորելու, ներկերի արտադրության, կաշվի մշակման, գոմեշներին ,,ձիթելու,, և այլնի համար, Արարատյան դաշտի որոշ գյուղերում ազկանեփի ձեթից նաև օճառ են պատրաստել:

գ/ Ձեթի դերը մեծ է եղել հատկապես ժողովրդական բժշկության ասպարեզում: Ամենաբարդ տիպի հիվանդություններ բուժելու համար օգտագործվել է կտավատի, ձիթապտղի և ազկանեփի ձեթ: